

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

**ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՔԻ ԽՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՎ  
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՏԱՐԿՈՒՄ)  
Վարդուհի ՊՈՂՈՍՅԱՆ**

**Բանալի բառեր՝** ներգոյական հոլովք, խմաստի դրսորում, հատողի վերջավորություն, նախակիր, գրաբար, միջին հայերեն, եղակի թիվ, հոգնակի թիվ, սպական-տրական հոլովք, հայցական հոլովք, վերլուծական կազմություն:

**Ключевые слова:** предложный падеж, семантическое представление, особое окончание, предлог, древнеармянский и среднеармянский язык, единственное число, множественное число, дательный падеж, винительный падеж, аналитическая конструкция.

**Key words:** prepositional case, semantic manifestation, peculiar ending, preposition, Old and Middle Armenian, singular, plural, dative case, accusative case, analytic construction.

### B. Պօղօսյան

#### Семантическое представление предложного падежа в грабаре и в среднеармянском языке/общий обзор/

Изучив функционирование предложного падежа в древнеармянском(грабар) и среднеармянском языке, мы пришли к следующим выводам: в грабаре и на первом этапе среднеармянского языка предложный падеж особых дифференцирующих окончаний не имел и всегда выступал с предлогом "ի", который большой частью употреблялся в форме дательного падежа единственного числа и винительного падежа множественного. То есть, было предложное сочетание, посредством которого реализовалось значение предложного падежа. На втором этапе среднеармянского языка у предложного падежа появляется особое окончание "ում", имевшее, однако, строго ограниченное употребление, поскольку предпочтение по-прежнему отдавалось аналитической конструкции.

### V.Poghosyan

#### Semantic Manifestation of the Prepositional Case in Grabar and Middle Armenian/general review/

Having studied the use of the prepositional case in Old and Middle Armenian, we have come to the following conclusion: in Old and Early Middle Armenian the prepositional case had no peculiar differentiating endings and always was used with the preposition "ի", which was mainly used in the form of the dative case of singular and the accusative case of plural. In other words, there was prepositional combination by means of which the meaning of the prepositional case was realized. In late Middle Armenian the prepositional case acquired a peculiar ending "ում", which strongly limited its usage, as non-prepositional analytic construction was still preferable.

Ուսումնասիրենով ներգոյական հոլովք գրաբարում (իին հայերեն) և միջին հայերենում՝ նկել ենք հետևյալ եղակացության.գրաբարում և միջին հայերենի առաջին ննթաշրջանում ներգոյական հոլովք հատողի տարբերիչ վերջավորություն չուներ. այս միշտ ուղեկցվում էր ի նախորդով, որը մեծ մասամբ դրվում էր նզակի տրականի և հոգնակի հայցականի վրա, այսինքն՝ նախորդավոր կապակցություն էր, որի միջոցով արտահայտվում էր ներգոյական հոլովքի իմաստը: Իսկ միջին հայերենի նրկորդ ննթաշրջանում ի հայտ նկավ ում հատողի վերջավորությամբ ներգոյականը,որը խիստ սահմանափակ կիրառություն ուներ, քանի որ առաջնորդությանը դարձյալ գրաբարյան վերլուծական ձևին էր պատկանում:

? Երգոյական հոլովք հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում ունեցել է տարբեր դրսնորում-ներ, մինչև որ միջին գրական հայերենի նրկորդ ննթաշրջանում ի հայտ նկավ ում վերջավորությամբ կազմությունը:

Հին հայերենում ներգոյական հոլովք հատողի տարբերիչ վերջավորություն չուներ: Այդ պատճառով էլ նրան միշտ ուղեկցում էր ի նախդիրը,որը հանդիս էր զալիս որպես ներգոյական նման հոլովներից տարբերակող լրացուցիչ միջոց,այսինքն՝ նախորդավոր կապակցություն էր, որի միջոցով արտահայտվում էր ներգոյական հոլովքի իմաստը: Այսպիսով՝ գրաբարում ներգոյական հոլովքի իմաստն արտահայտելու համար ի նախդիրը դրվում էր նզակի տրականի և հոգնակի հայցականի վրա: Եզակի թվում ներգոյականն ունի հետևյալ դրսնորումները.

ա) նման էր լինում տրականին բոլոր այն դեպքերում, երբ վերջինս տարբերվում էր սեռականից, ինչպես՝ ի միում, յառաջնում, ի հնում, ի նորում, ի տնկուց, յայգուց, ի տարուց և այլն: Օրինակ՝

*Չոր տեսնեալ Շապիոյ՝ կշտամբեաց զնա բանիք յանդիման զօրաց իրոց, և զաշ նորա կուրացոյց՝ որպէս զՄերեկիային այնու ի հնումն:* (3, 332)

թ) Որոշ ժամանակացոյց բառերի դեպքում վերջանում էր -եսն-ով, մինչդեռ սեռական-տրականը կարող էր ունենալ այլ ձև՝ սեռական-տրական՝ **առայ** (ամսեան-ի կողքին), ներգոյական **յամսնան** և այլն:

զ) Ո-ով հիմքերի դեպքում նման էր լինում հայցականին, այսինքն՝ առանց որևէ վերջավորության՝ **ի քոն, ի լուր, ի թիւ, ի սուզ, ի հաւատ, ի վիճ, ի գուիթ** և այլն, օրինակ՝

*Իսկ իբրև նեխնցաւ դի նորա հրամայէ ընկենուլ ի վիճ մեծ և ծածկել:* (3,62)

Ընդ որում՝ այս հոլովման պատկանող որոշ բառեր ներգոյականի իմաստն արտահայտելիս կարող են ստանալ սեռական-տրականից տարբեր **ի կազմիչը՝ ի բերանի, ի գիշերի, ի կառկածի, յերազի, ի սահմանի** և այլն, օրինակ՝

*Ենզուն միայն կայր կենդանի ի բերանի նորա:* (4.280)

դ) Կատուկ անունների դեպքում ևս նման էր հայցականին՝ **ի հոմ, ի Թիւ, յԱնի, յԱրտաշատ, յԱշոհշատ, յԵրուսաղեմ** և այլն, օրինակ՝

Որում հավանեալ *Տիգրան, կանզնեաց զՌոյիմպիական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիւ, և զԱրտենիդայ զմիւս պատկերն յԵրիզայ, և զԵփեստուն ի Բազայատինք:* (3,146)

Այս դեպքում ևս կարող էին ստանալ **ի կազմիչը՝ ի հոմի, ի Տարանի** և այլն: Օրինակ՝

*Նոյնպէս և եղբայր նորա Փորոխանոս սպանաւ յնտ ութաւն և առոր ի Տարսոնի:* (3,260)

ե) Մյուս բոլոր դեպքերում նման էր սեռական-տրականին՝ **յամի, յերկրի, ի քաղաքի, ի մատնին, ի շարաթու, ի ծովների, ի կոտորման, ի սկզբան, ի մանկութեան, ի բերդի, ի սրտի** և այլն: Օրինակ՝

Չոր առեալ *Աժդահակայ, ոչ միայն վասն նենզին որ ի սրտի իրում, այլ և վասն զեղեցկութեանն, առաջին իրոց կանանցն կարգէ և զշարութիւնն ի ներքոյ ուստայն հինու:* (3, 94)

զ) Հոգնակի ներգոյականը միշտ նման էր լինում հոգնակի հայցականին՝ նրանից տարբերվելով միայն **ի նախորի առկայությամբ՝ յատուր, ի բանս, ի բաղանիսն, ի կերակուրս, յըմպելիս, ի հովիտս, յանկողինս, ի խրախճանութիւնս** և այլն.

Զայս և որ այլ այսպիսիք բազումք, երեր մերոյ աշխարհիս խարտեաշս և մեղուակն, անձնեայն և թիկնաւետն, առոգաբարձն և զեղեցկուն, պարկեշտն **ի կերակուրս և յըմպելիս, ի խրախճանութիւնս օրինաւոր:** (3,86)

Միջին հայերենում ներգոյական հոլովի իմաստի արտահայտման հիմնական միջոցը մնում էր գրաբարյան կազմությունը, հատկապես առաջին նաթաշրջանում. այն էր՝ **ի նախդիր + նզակի սեռական-տրական, ի մահու, ի մտին, ի գիշերի, ի տուրնջեան, ի ծերութեան, ի զբաղման, ի սենեկին, յանձին, ի խրախճանի, և ի հոգնակի հայցական՝ ի բարձունս, ի տունս, ի սերմանս, ի յայրս, ի փապարս և այլն:** Օրինակ՝

**Եզակի՝**

Որքան որձակն էր կենդանի՝

*Հաւերն կային ի խրախճանի...* (5,140)

**Հոգնակի՝**

Իսկ կեսքն կուսութեամբ զանձինս պահեցին,

*Ի յայրս և ի փապարս լերանց բնակէին...* (6,109)

Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում կարող ենք հանդիպն ներգոյական հոլովի իմաստի արտահայտման ևս մի ներանակի՝ **ի նախդիր+նզակի հայցական, սակայն, նթեն գրաբարում, ի միջան արդեն նշել ենք, այս կազմությամբ ներգոյականի իմաստն արտահայտվում էր միայն ո-ով հիմքերի և հատուկ անունների դեպքում, առանց ուսուն չենք կարող ասել միջին հայերենի մասին. այստեղ տարբեր հոլովումների պատկանող բառեր կարող են ներգոյականի իմաստն արտահայտել վերոհիշյալ նորանակով, ընդ որում, մինույն բառը կարող է այդ իմաստն արտահայտել և նզակի տրականի, և նզակի հայցականի միջոցով, ինչպես օրինակ՝ **ի երոյ, ի հուր, ի մէջլիս, յարգանդի և յարգանդ, ի տան և ի տուն և այլն:** Օրինակ՝**

**Ի մէջլիսին դու մի ննջալ,**

Փոքր բանի մի տրտնջալ:

Յորժամ ***ի մէջիս*** նատիս,հարթենաս,ուղին կարեն ոչ.

Օպազն ի քնզ պարծանք հաշվես,զամոթուղ տեղն զիտեն ոչ...(7,50)

Ինչ վերաբերում է հատուկ անուններին,այստեղ ևս ներգոյականի իմաստն արտահայտվում է եղակի հայցականով ***ի Բարելոն, ի Թարվեզ, ի Լիբանան*** և այլն.

Յարզրումզի էր Ծահպազ Մահդախն,

Նստեր ***ի Թարվեզ***, որ Ծահաստան ասին...(5,199)

Ինչպես գրաբարում, միջին հայերենում ևս ***տեղի և ժամանակի*** իմաստ արտահայտող մի քանի քառեր, որոնք որպես ձևական ընդհանուր հատկանիշ ունեն հիմքի ի հանգը, ներգոյականի իմաստն արտահայտում են ***ի նախորիի և ոզ ցուցիչով տրականի միջոցով***, ինչպես՝ ***ի տեղոց, ի տարոց, յայզոց, յեկենեցոց*** և այլն: Օրինակ՝

***Յայզոց*** հոր փորէ,

Ծաղամն ու բողկն հորէ: (5,153)

Միջին հայերենում լայն տարածում է գտնում ***սեռական-տրական*** հոլովով և ***մեջ կապով ներգոյական*** հոլովի իմաստի արտահայտման նկարագրական եղանակը՝ ***հրոյն մէջ, աղբոյի մէջն, փորձութենան մէջն, մէջիսի մէջն, ջրին մէջն, սրտիս մէջն, ինչպես՝ ի տեղոց, ի տարոց, յայզոց, յեկենեցոց*** և այլն:

Առէկ կամանչ չիման լինի,

Խաշած զառն,բոլոր սինի,

Ցուրտ ***աղբոյի մէջ***՝ մի կուժ գինի,

Խմելք,եղբարք իմ,ցնծալով...(5,80)

Ընդ որում, ***մէջ*** կապի հետ միաժամանակ կարող ենք հանդիպել ի նախդիրը, այսինքն՝ ***ի+մէջ+սեռական-տրական*** հոլով, ինչպես՝ ***ի մէջ տերևին, ի մէջ զիշերին (զիշերոյ), ի մէջ հանդիսի, ի մէջ պատշին, ի մէջ թվերին, ի մէջ լուսոյ, ի մէջ այզոյ*** և այլն.

Պլառուն զայն տեսաւ ասաց գոհութիւն,

Յամենայն բերանոյ օրինաբանութիւն,

Թագաւորին երկնից փառաբանութիւն

Տնսայ աչօք ըգվարդն ***ի մէջ թրուիերին:(6,237)***

Այսպիսով՝ թե՛ գրաբարում և թե՛ միջին հայերենում ներգոյական հոլովի իմաստը մեծ մասամբ արտահայտվում էր ի նախդրի և եղակիում ***տրականի***, հոգնակիում ***հայցականի*** միջոցով: Միակերպության (համարանության) օրենքը պահանջում էր, որ կամ հոգնակին հետևեր եղակիին, և կամ եղակին՝ հոգնակիին. առաջին դեպքում ներգոյականը կնոյնանար բացառականի հետ, իսկ երկրորդ դեպքում՝ նախդրիվ հայցականի հետ: Այս պատճառով էլ ներգոյականի կազմության հին օրենքը զնշվեց, և նրա փոխարեն տարածվեցին կը ճյուղի բարբառներում վերոհիշյալ ***մեջ*** կապով կազմված ձևերը, իսկ ***ում*** ճյուղի բարբառներում՝ ***ում*** մասնիկով կազմված ձևերը: Վերջինս ի հայտ եկավ միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում, այն էլ՝ միայն եղակի ներգոյականը կազմնլու համար: Հոգնակի ներգոյական միջին հայերենի շրջանից վկայված չէ: ***Ում*** ներգոյականի վերջավորությունն ուներ խիստ սահմանափակ կիրառություն(քանի որ առաջնությունը դարձյալ գրաբարյան վերլուծական ձևին էր պատկանում). այս վերջավիրությամբ ներգոյականի կարող ենք հանդիպել մեծ մասամբ Նադաշ Հովսաթանի բանաստեղծություններում, ինչպես՝

Ես կատու եմ՝ մկան նայի,

<sup>1</sup> Հստ *L.U.Հովսենիցանի՝ այս ոք-ը ևս միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում նեղել է ներգոյական հոլովի հաստով վերջավորությունները վկայված է գրաբարից,սակայն,ի տարբերությունն ում վերջավորության,չի տարածվել և չի ընդհանրացվել: Ներգոյականի ***ոք*** վերջավորությունը ծնով և ծագումով համեմնենում է ***ոզ*** հոլովման եղակի սեռական-տրական հոլովի զուցիչ հետո,սակայն վերջինն իհմնականում վերապահվում էր անծինք, հատկապես ազգակցական կատեր նշանավոր անունները, իսկ այդ անունները կամ ներգոյական հոլով ընդհանրապես չունեն,կամ այն կազմում են նկարագրական եղանակներ: Մինչեւ այն անունները,որոնք եղակի ներգոյականում ստունում են ***ոզ*** վերջավորություններ,մեծ մասամբ տեղի և ժամանակի իմաստ են արտահայտում և իհմնականում որպես ձևական ընդհանուր հատկանիշ ունեն հիմքի ի հանգը: Կարևոր տարբերակիչ հատկանիշ է նաև այն, որ այս բառերը,եղակի սեռական-տրականում երբեք հանդեն չեն զայիս ***ոզ*** վերջավորությամբ: Այսպիսով՝ դրանք համանուն ձևություններ են, և ենց այդ համանությունն պատճառով էլ ***ոզ*** վերջավորությամբ ներգոյականը լայն տարածում չի գտնում և դրւու է մղփում յնզվի հոլովման համակարգից իր տեղը զիշերը ***ում*** ներգոյականի հաստով վերջավորությանը(տես՝ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Երևան, 1975թ., էջ77):*

Արտուր դրել եմ դադի,  
Չարուս շինեմ Ղարաբաղի՝  
Ով որ եկել է ինձ թաղի:(5,98)  
Այս, երանի էն դամն,  
Որ կերայ հային անդամն,  
Քերանումս մնաց համն,  
Այ յ տէր,քեր,լից խմենք ջամն... (5,148)

Ում-ը վկայված է գրաբարից. այն եղել է նզակի տրականի վերջավորություն<sup>1</sup>, և քանի որ նզակի ներգոյականի իմաստն արտահայտվում էր նզակի տրականի միջոցով, ինչպես օրինակ՝ ի հնում, ի նորում, ի միում, յառաջնում և այլն, ապա, ժամանակի ընթացքում լայն տարածում ձեռք բերելով, դառնում է ներգոյականի հատուկ վերջավորություն: Սկզբնապես տեղ և ժամանակ գոյց տվող մի քանի անունների վրա է տարածվել, այնուհետև ընդհանրացնել և հաստատվել ժամանակակից արևելահայերնում, որին էլ վիճակված էր դառնալ աշխարհաբար լնզվի երկու գրական տարրերակների հիմնական սահմանագատիչ հատկանիշներից մեկը:

#### Համառոտագրություն

1. Լ.Հովսեանի, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ., Երևան, 1975:
2. Գ.Զահորկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959:
3. Մ.Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1981:
4. Եղիշէ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1989:
5. Ն.Հովսեան, Տաղեր, Երևան, 1957:
6. Գ.Աղթամարցի, Երևան, 1963:
7. Ն.Քոչակ, Հայերենի կարգաւորություն, Երևան, 1957:
8. Ա.Աբրահամյան, «Գրաբարի ձեռնարկ», Երևան, 1976թ.:
9. Ռ.Ա.Ղազարյան, հ.Մ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 1992:

#### Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդուի Պողոսյան – ԱրՊԿ ասպիրանտ

E-mail: pogosyanseyran2010@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորեն խմբագրական կողմանից անդամ, բ.գ.դ. Լ. Հովհաննիսյանը:

<sup>1</sup> Ո-ով իհմը ունեցող որոշ բառերի դեպքում տրականն ունենում է մ վերջավորությունը.որից առաջ իհմքակազմ ո-ն փոխվում է ու-ի՝ հայերենի պատմական հնչյունափոխության սովորական կամնակ'նորոյ-նորում,միոյ-միում,հնոյ-հնում և այլն(սեն՝ Գ.Զահորկյան, հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959թ.,էջ87):